ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2022-2032թթ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ ԿԵՆԴԱՆԻ ԳՈՐԾԸՆԹԱՑ

WWW.STEPANAVAN.AM

WWW.VISITSTEPANAVAN.AM

Համայնքի ղեկավարի ուղերձը

Ստեփանավան համայնքի սիրելի բնակիչներ,

Ստեփանավան համայնքը մեր տունն է, որի զարգացմանն ու շենացմանը պետք է ուղղված լինի յուրաքանչյուրիս ջանքն ու եռանդը: Համայնքապետարանի ամենօրյա հետևողական աշխատանքից, մշտական հոգածությունից ու սրտացավ վերաբերմունքից զատ, այս կարևոր առաքելության ճանապարհին մեզ անհրաժեշտ են հատուկ մշակված քայլեր, հստակ ծրագրեր,որի անմիջական մասնակիցներն ու աջակիցները պետք է լինեք նաև դուք:

Համայնքի զարգացման ծրագրերն անխոս շարունակական են լինելու: Առաջնորդվելով ռազմավարական ծրագրերով և ներդրված քաղաքականության արդի մոդուլներով և գործելով ձևավորված վստահության և փոխգործակցության մթնոլորտում՝ շարունակելու ենք զարգացնել համայնքը՝ հետևողականորեն իրագործելով նպատակային ծրագրեր և բարեփոխումներ, արդյունավետ նախագծեր և նախաձեռնություններ:

Շենացնե՛նք, մեր համայնքը միասին:

Արմեն Գրիգորյան

Ստեփանավան
համայնքի ղեկավար

ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ ԿԵՆԴԱՆԻ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ. ՊՈՐՏՖԵԼԱՅԻՆ ՄՈՏԵՑՈՒՄ

2021թ.-ին, ՄԱԶԾ աջակցությամբ, Ստեփանավան համայնքը կիրառեց նորարարական պորտֆելային մոտեցումը, որի հիմնական ուղղություններն են.

- Ունկնդրել և հասկանալ քաղաքի առկա դինամիկան (community listening):
- Իրականացնել մասնակցային պլանավորում (այդ թվում՝ կիրառելով վերաիմաստավորման (sensemaking) և ապագայի մոդելավորման գործիքներ (foresight)) շահագրգիռ կողմերի հետ միասին:
- Իրականացնել ճկուն, ինտերակտիվ կառավարում՝ հիմնված վերաիմաստավորման, քաղված դասերի և ամուր գործընկերությունների վրա:
- Քաղաքին ունկնդրելու, վերաիմաստավորման և ապագայի մոդելավորման աշխատաժողովների արդյունքում, շահագրգիռ կողմերի հետ համատեղ, Ստեփանավան համայնքը 2022թ.-ին կազմեց իր <<Կենդանի>> ռազմավարությունը, որն, ըստ ընթացակարգի, վերանայվելու է առնվազն տարին մեկ անգամ՝ հիմնվելով մոնիթորինգի, գնահատման և քաղված դասերի, ինչպես նաև վերաիմաստավորման աշխատաժողովի արդյունքների վրա:

2023թ.-ի Ստեփանավանի Տարեկան աշխատանքային պլանը կազմվել է՝ հիմք ընդունելով 2022-2032թթ.-ի «կենդանի» ռազմավարությունը:

ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԿԱՐԻՔԸ՝ ԸՍՏ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ԵՎ ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ. ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

- Ապահովել մասսայական զբաղվածության, աշխատատեղերի ստեղծում
- Նախադպրոցական կրթության հաստատություններում հարմարեցումների բարելավում
- Առևտուր և հանրային ծառայությունների սպասարկման որակի բարելավում
- Համայնքը դարձնել զբոսաշրջային կենտրոն
- Ժամանցային վայրերի ստեղծում, բարեկարգում
- Ֆիզիկական կուլտուրա և սպորտ ճյուղերի զարգացում
- Բարեկարգ և հարմարավետ համայնք
- Քաղաքաշինության և կոմունալ տնտեսության աշխատանքների համակարգում
- Առողջապահության ոլորտի որակյալ սպասարկում
- Փողոցների բարեկարգում, կանաչապատում և լուսավորում
- Ստեփանավան համայնքի վարչական բնակավայրերի հողօգտագործման իրականացում
- Դեպի համայնք մրցունակ կադրերի ներգրավում

ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2022-2032ԹԹ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ



Աշխարհին կապված, զբոսաշրջային և համագործակցող համայնք

ՌՈՒ-1

2032թ.-ի ՏԵՍԼԱԿԱՆԸ

1.1 Ֆրանսիայի Դեսին քույր քաղաքի և այլ քույր քաղաքների հետ համագործակցությունը ակտիվ համակարգված բնույթ է կրում:
1.2 Ստեփանավանի օդանավակայանը գործարկված է. ծառայում է նաև ավիացիոն տուրիզմի համար:
1.3 Ստեփանավան համայնքում գործում է միջհամայնքային և համայնքային բարձրորակ հանրային տրանսպորտային ցանց:
1.4 Ստեփանավանում արկածային և էքստրեմալ տուրիզմի էկոհամակարգը զարգացած է:
1.5 Համայքնում առկա են էկոտուրիզմի և արշավային տուրիզմի մի շարք երթուղիներ. համայնքում գործում են բազմաթիվ հյուրատներ և գաստրոբակեր, տեղի բնակչությունը ակտիվ ներգրավված է տուրիստական ծառայությունների մատուցման գործում:
1.6 Առողջարանային տուրիզմը քաղաքում զարգացած է , առկա է շնչառական խնդիրներին ախտորոշման մասնագիտացված բժշկական հաստատություն: Առկա են տարբեր առողջարանային ծառայություններ:

2024թ. Միջանկյալ քայլեր

1. Ստորագրել հուշագիր քույր քաղաքների հետ: Տվյալ քաղաքի պոտենցիալ զբոսաշրջիկներին ներկայացնել Ստեփանավանի կողմից առաջարկվող տուրիստական պրոդուկտներ/ փաթեթներ:
2. Կարգավորել օդանավակայանի գործարկման համար անհրաժեշտ իրավական դաշտը:
3. Ձեռք բերել մաքուր վառելիքով աշխատող տրանսպորտային միջոցներ՝ ապահովելու հանրային տրասպորտի գործունեությունը:
4. Ձևավորել սերտ համագործակցություն ՀՀ և արտերկրի տուրիստական կենտրոնների հետ:
5. Ստեղծել էկոտուրիզմի և արշավային տուրիզմի երթուղիներ:
6. Ներգրավել ներդրողներ համայնքում առողջարանային կենտրոններ հիմնելու համար:

2026թ. Միջանկյալ քայլեր

1. Քույր քաղաքների հետ իրականացնել փորձի փոխանակման քայլեր:
2. Պատրաստել օդանավակայանը գործարկման:
3. Գործարկել հանրային տրանսպորտի աշխատանքը:
4. Նպաստել Ստեփանավան համայնքով հետաքրքրված տուրիստների թվի աճին:
5. Կազմել արշավային և էկոտուրիզմի որակավորում անցած ուղեկցողների անվանացանկ:
6. Ստեփանավանում գործարկել հանգստյան տներ և առողջարաններ՝ սուր շնչառական հիվանդությունների համար:

Աշխատող, ագրոտնտեսապես զարգացած համայնք

ՌՈՒ-2

2032թ.-ի ՏԵՍԼԱԿԱՆԸ

2.1. Համայնքապետարանում գործող վերլուծության և ներդրումների ստորաբաժանման արդյունավետ աշխատանքի արդյունքում՝ իրականացվում են նպատակային ներդրումներ, զարգացած է տնտեսությունը ոչ միայն ավանդական, այլև նոր տեխնոլոգիական ոլորտներում:
2.2 Համայնքում կայուն գործունեություն են ծավալում խոշոր ընկերություններ և ՓՄՁ-ներ՝ ինչպես արտադրական, այնպես էլ SS ոլորտի: Սոցիալական ենթակառուցվածքները զարգացած են, ժողովրդագրական և սոցիալական ցուցանիշները աճում են:
2.3 Ստեփանավան համայնքը հեռավար աշխատողների համար իդեալական վայր է, ներգրավված են տեղի երիտասարդներ:
2.4 Ստեփանավան համայնքում գործում է կոլեկտիվ գյուղատնտեսություն: Տեղացի Ֆերմերները համագործակցում են արտերկրյա քաղաքի ֆերմերների հետ:
2.5 Համայնքի գյուղերում զարգանում է գյուղատնտեսությունը՝ այդ թվում օրգանական, արտադրվող սնունդը օգտագործվում է համայնքի բնակիչների կողմից և արտահանվում է:



2024թ Միջանկյալ քայլեր

1. Ստեփանավանի համայնքապետարանում զարգացնել վերլուծությունների և ներդրումների կարողությունը:
2. Ընդլայնել ՓՄՁ-ների համար նոր ֆինանսական աջակցության ծրագրերի, նախագծերի, ռեսուրսներ ներգրավելու հնարավորությունները:
3. Մշակել քաղաքը հեռավար աշխատողների համար իդեալական վայր դարձնելու գործողությունների ծրագիրը:
4. Նպաստել ֆերմերային տնտեսությունների զարգացմանը:
5. Մշակել գյուղատնտեսության զարգացման գործողությունների ծրագիրը:

2026թ Միջանկյալ քայլեր

1. Համայնքապետարանի վերլուծության և ներդրումների ստորաբաժանումը իրականացնում է վերլուծական աշխատանքներ, ներդրումային ծրագրեր՝ փորձելով ներգավել ռեսուրսներ:
2. Համայնքը շարունակում է նպաստել գործարարության աճին, ստեղծվում են աշխատատեղեր, զարգանում են սոցիալական ենթակառուցվածքները:
3. Ստեղծել ենթակառուցվածքներ հեռավար և ֆրիլանս աշխատանքի համար:
4. Համայնքում շարունակել զարգացնել կոլեկտիվ գյուղատնտեսությունը:
5. Վերջնականացնել գյուղատնտեսության զարգացման ծրագիրը:

Կրթված մշակութահեն, նորարարական և ժամանցով հագեցած համայնք

ՌՈՒ-3

2032թ.-ի ՏԵՍԼԱԿԱՆԸ

3.1 Ստեփանավան համայնքն ունի ժամանակակից գրադարան՝ հագեցած ծառայություններով:
3.2 Ստեփանավանում գործում է ոչ ֆորմալ կրթական կենտրոն՝ բազմապրոֆիլ մասնագիտություններով:
3.3 Համայնքում գործատուների և կրթության հաստատությունների միջև փոխհամագործակցությունը սերտ է. համայնքում առկա են մրցունակ մասնագետներ:
3.4 Ստեփանավանում ձևավորված է երիտասարդական և մշակութային տուրիզմի ակտիվ գործող հարթակ, որի շրջանակներում իրականացվում են երիտասարդ ռեժիսորների, ֆիլմերի պրոդյուսերների, ֆիլմարտադրության հետ կապված այլ ստեղծագործող խմբերի հետ համատեղ փառատոններ, գիտամատչելի ուսումնական ֆիլմերի ցուցադրումներ և վարպետաց դասեր:
3.5 Սոս Սարգսյանի անվան մշակույթի պալատում տիրում է ժամանցային հագեցած առօրյա: Մանուկները հետաքրքիր և բովանդակալից տիկնիկային թատրոն են վայելում:

Քաղաքային գրադարան

Ստեփան Շահումյանի տուն-թանգարան

Սոս Սարգսյանի անվան մշակույթի պալատ

2024թ Միջանկյալ քայլեր

1. Համայնքում սկսել ժամանակակից գրադարանի կառուցումը:
2. Համայնքում մշակել ոչ ֆորմալ ուսուցման կենտրոնների ստեղծման գործողությունների ծրագիր:
3. Մշակել Ստեփանավան համայնքում ժամանակակից կրթօջախների ստեղծման գործողությունների ծրագիրը:
4. Ստեփանավան համայնքում Սոս սարգսյանի անվան մշակույթի պալատում իրականացնել վերանորոգման աշխատանքներ, տեղադրել արևային ջեռուցման համակարգ:
5. Սոս Սարգսյանի անվան մշակույթի պալատում մշակել երեխաների համար տիկնիկային թատրոն, տեղական հայկական ներկայացումներով, խաղացանկով:

2026թ Միջանկյալ քայլեր

1. Գործարկել համայնքի ժամանակակից գրադարանը:
2. Գործարկել ոչ ֆորմալ կրթական կենտրոնը՝ բազմապրոֆիլ
3. Ստեփանավան համայնքում գործարկել Ագրարային համալսարանի մասնաճյուղ:
4. Ստեփանավանում մշակութասեր զբոսաշրջիկների ու երիտասարդների համար անցկացնել վարպետաց դասեր:
5. Սոս Սարգսյանի անվան մշակույթի պալատում կազմակերպել միջոցառումներ:
6. Սոս Սարգսյանի անվան պալատում գործարկել տիկնիկային թատրոնը:

Արթուր Ղարիբյանի անվան արվեստի դպրոց

Ս. Սարգիս եկեղեցի

Մանկապատանեկան սպորտ դպրոց

«Լույս» երիտասարդական կենտրոն

Ստեփանավանի մանկապարտեզների ավարտական խմբի սաները

Հագեցած, մրցունակ տեղական ինքնակառավարում ունեցող համայնք

ՌՈՒ-4

2032թ.-ի ՏԵՍԼԱԿԱՆԸ

4.1 Ստեփանավանի համայնքապետարանում ներառական բաց կառավարման համակարգը, ՏԻՄ թափանցիկությունը և հաշվետվողականությունը քաղաքացիների համար հասանելի է:
4.2. Առկա է տվյալների հավաքագրման համակարգ, որի միջոցով իրականացվում է մոնիթորինգ քաղաքացիների և ՀԿ-ների մասնակցությամբ:
4.3. Քաղաքում գործում է բաց և մասնակցային տեղեկատվական հարթակ:
4.4. Համայնքապետարանը հագեցած է անհրաժեշտ ժամանակակից տեխնիկական համակարգերով և մրցունակ մարդկային ռեսուրսներով:
4.5. Համայնքապետարանը ներգրավում է այլընտրանքային ֆինանսական ռեսուրսներ՝ համագործակցելով ՀԿ-ների, միջազգային կազմակերպությունների հետ:

2024թ. Միջանկյալ քայլեր

1. Ստեղծել աշխատանքային խումբ ներառական ՏԻՄ կառավարման համակարգ ստեղծելու գործողությունների ծրագրի կազմման համար:
2. Համայնքում գործարկել տվյալների հավաքագրման համակարգի գործողությունների ծրագիրը:
3. Համայնքում գործարկել տեղեկատվական հարթակը:
4. Կազմել գործողությունների ծրագիր՝ համայնքապետարանը տեխնոլոգիաներով և մարդկային ռեսուրսներով ապահովելու համար:
5. Կազմել գործողությունների ծրագիր այլընտրանքային ֆինանսական ռեսուրսների ներգավման նպատակով:

2026թ Միջանկյալ քայլեր

1. Գործարկել Ստեփանավան համայնքում ներառական եւ բաց կառավարման գործընկերության հարթակը:
2. Գործարկել տվյալների հավաքագրման համակարգը:
3. Գործարկել բաց և մասնակցային տեղեկատվական հարթակը:
4. Ապահովել համայնքապետարանին տեխնիկական և մրցունակ մարդկային ռեսուրսներով:
5. Համայնքում իրականացնել ֆոնդհայթայթման արդյունքում կազմված ծրագրերը:

Դիմակայուն, ինքնատիպ և կանաչ համայնք

ՌՈՒ-5

2032թ.-ի ՏԵՍԼԱԿԱՆԸ

5.1. Ստեփանավանն ունի «Կանաչ համայնք» բրենդը՝ ներառյալ Կանաչապատման ռազմավարությունը եւ գործողությունների պլանը:
5.2. Ստեփանավան համայնքում գործում է աղբահանության և թափոնների վերամշակման արդյունավետ համակարգ:
5.3. Համայնքն ունի կանաչ էներգիայի և տնտեսության զարգացման տեսլական և էներգախնայող համակարգերի արդյունավետ ծրագիր:
5.4. Համայնքի բնակիչներն ապահովված են պատշաճ կացարաններով, որտեղ անվտանգության ներառականության բոլոր նորմերը պահպանված են: Պահպանվում է քաղաքի կոլորիտը:
5.5. Համայնքի փողոցներում և միջհամայնքային տարածքներում գործում է խելացի, կանաչ տրանսպորտային համակարգ՝ աղետը հաղթահարելու կանխարգելիչ միջոցներով:
5.6. Ստեփանավանում զարգացած են ԱՌԿ կարողությունները:



2024թ. Միջանկյալ քայլեր

1. Մշակել «Կանաչ համայնք» բրենդը և զարգացման ծրագիրը:
2. Իրականացնել թափոնների կայուն կառավարմանն ուղղված կարողությունների գնահատում և մշակել կարողությունների զարգացման գործողությունների ծրագիր: Իրականացնել շրջանաձև տնտեսության դերի բարձրացմանն ուղղված ուսումնասիրություն: Իրականացնել արժեք ներկայացնող թափոնների օգտահանում:
3. Իրականացնել համայնքում այնընտրանքային էներգիայի աղբյուրների և էներգախնայողության հնարավորությունների քարտեզագրում: Իրականացնել պիլոտային ծրագրեր:
4. Մշակել համայնքային դիմակայուն բարձրացման ծրագիրը, այդ թվում ԱՌԿ կարողությունների զարգացման ծրագիրը, ստեղծել համայնքի դիմակայունության թիմ:
5. Մշակել փողոցների վերանորոգման, սալիկապատման, խելացի տրանսպորտային համակարգի զարգացման պլան:
6. Սեյսմիկ ռիսկի մոդելավորումը վերանայել ամբողջությամբ - Ճարտարապետական նախագիծը վերանայել ամբողջությամբ :

2026թ. Միջանկյալ քայլեր

1. Գործարկել կանաչապատման գործընթացներն ու խնամքն իրականացնող համակարգը՝ «Կանաչ համայնք» բրենդի չափորոշիչներին համապատասխան:
2. Իրականացնել կոշտ կենցաղային թափոնների վերամշակում, և այլ շրջանաձև տնտեսության միջոցառումներ:
3. Համայնքում տեղադրել վերկանգնվող էներգիայի աղբյուրները:
4. Ապահովել համայնքի բնակիչներին շինարարական նորմերին համապատասխան կացարաններով:
5. Վերանորոգել և սալիկապատել համայնքի փողոցները, ներդնել խելացի տրանսպորտ համակարգը:
6. Իրագործել համայնքային դիմակայունության բարձրացման ծրագիրը:

Առողջ և սպորտային համայնք

ՌՈՒ-6

2032թ.-ի ՏԵՍԼԱԿԱՆԸ

6.1. Ստեփանավանը հագեցած է զբոսաշրջային-մարզական ինդուստրիայի զարգացման համար նպաստավոր պայմաններով՝ բազմաֆունկցիոնալ բացօթյա այգի և մարզադաշտ, առողջարանային համալիրներ, կանաչ այլընտրանքային փոխադրամիջոցներ:
6.2. Ստեփանավանում առողջ ապրելակերպը դարձել է մշակույթ, խթանվում է առողջ ապրելակերպի մասսայականացումը՝ այդ թվում հեծանվավարությունը և քայլարշավները:
6.3. Բուժառողջարարական զբոսաշրջության շուկան զարգացնելու նպատակով ստեղծվել են առողջանային կոմպլեքսներ:
6.4. Համայնքի Բժշկական կենտրոնը բնակչությանը ցուցաբերում է բազմապրոֆիլ և բարձր որակավորված բժշկական օգնություն՝ ժամանակակից ախտորոշիչ և վիրաբուժական տեխնոլոգիաների ներդրման շնորհիվ, իրականացվում է նպատակային ուսուցման ծրագիր:

2024թ. Միջանկյալ քայլեր

1. Համայնքի քաղաքային այգի տանող ճանապարհները հարմարեցնել այլընտրանքնային փոխադրամիջոցներին: Շահագործել մարզական այգին՝ բազմաֆունկցիոնալ մարզադաշտով, որի մի հատվատը ձմռանը վերափոխվում է սառցադաշտի:
2. Համայնքի բնակիչների համար հասանելի դարձնել այլընտրանքային փոխադրամիջոցներով (հեծանիվներ, սկուտերներ) տեղաշարժի հնարավորությունը:
3. Մշակել ներդրումային ծրագրեր Ժամանակակից առողջարանային կոմպլեքսների և հուզական առողջության/հոգեբանական ծառայությունների, կենտրոնների ստեղծման համար:
4. Ապահովել Ստեփանավանից, ԵՊԲՀ- ում սովորող ուսանողների համար նպատակային ուսուցում հետագայում Ստեփանավանի բժշկական կենտրոններում մրցունակ կադրեր ունենալու համար:

2026թ. Միջանկյալ քայլեր

1. Հանձնել շահագործման Ստեփանավան համայքի գյուղերի միջև զբոսաշրջային արահետները՝ քայլարշավների և ձիավարության համար:
2. Գործարկել հեծանվային արահետները, քայարշավային ուղիները, հեծանվային կայանները:
3. Սկսել ժամանակակից առողջարանային կոմպլեքսների և հուզական առողջության/հոգեբանական ծառայությունների, կենտրոնների կառուցումը:
4. Շարունակել ներգրավել բարձր որակավորում ունեցող բուժանձնակազմ Ստեփանավանի բուժկենտրոններում:

ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՆԱԽԱԳԾԵՐ 2022-2024 թթ

1. Ստեփանավանի Աղայան 1- ին և 2- րդ փողոցների հիմնանորոգում՝ տուֆե սալարկումով, 409 դիվիզիա նրբանցքի և Նելսոն Ստեփանյան փողոցի հիմնանորոգում՝ տուֆե սալարկումով:
Սուբվենցիա (պետական դրամաշնորհ, Ստեփանավան համայնք)

2. Զորավար Անդրանիկի , Սայաթ - Նովա, Պիոներների փողոցների հիմնանորոգում :
Սուբվենցիա (պետական դրամաշնորհ, Ստեփանավան համայնք)

4. Սոս Սարգսյանի անվան մշակույթի պալատի վերանորոգում և ջեռուցում:
Սուբվենցիա (պետական դրամաշնորհ, Ստեփանավան համայնք)

5. Ստեփանավան քաղաքային այգու և Ալեայի անցուղու հիմնանորոգում :
Սուբվենցիա (պետական դրամաշնորհ, Ստեփանավան համայնք)

6. Ստեփանավան համայնքի գրադարանի նոր մասնաշենքի վերանորոգում:
Սուբվենցիա (պետական դրամաշնորհ, Ստեփանավան համայնք)

7. Ստեփանավան համայնքում «Լույս» երիտասարդական կենտրոնի հիմնում:
Ստեփանավանի համայնքապետարան, ՄԱԶԾ, Ինստեփանավան զարգացման հիմնադրամ

8. Ստեփանավան համայնքում կանաչապատման գործընթացների համակարգում:
Ստեփանավանի կոմունալ սպասարկում և բարեկարգման ՀՈԱԿ

10. Ստեփանավան համայնքում օգտագործվում են այլընտրանքային վերականգնվող էներգիայի աղբյուրները, տեղադրված է արևային էներգախնայող մեխանիզմը, իրականացված է պիլոտային ծրագիրը:
Տարածքային Զարգացման Հիմնադրամ, ՄԱԶԾ, Ստեփանավանի համայնքապետարան

11. Ստեփանավան համայնքում իրականացվել է Ռումինական թիվ 2,16, 22 բազմաբնակարան շենքերի էներգաարդյունավետ արդիականացման ռիսկերի նվազեցման աշխատանքներ:
Սուբվենցիա (պետական դրամաշնորհ, Ստեփանավան համայնք), ՄԱԶԾ

12 Ստեփանավան համայնքի թիվ 1 դպրոցի համար կառուցվել է մարզադահլիճ:
Պետական դրամաշնորհ, Ստեփանավան համայնք

13.Աշոտաբերդ թաղամասի թիվ 3 դպրոցի կառուցում:
Տարածքային Զարգացման Հիմնադրամ

14. Դիմակայուն Ստեփանավան բարեգործական հիմնադրամի ստեղծում:
Ստեփանավանի համայնքապետարան:

15. Դեսին քույր քաղաքի հետ ստորագրվել է «Մտադրությունների մասին նամակ-հուշագի» :

16. Ստեփնավան համայնք և ԱՄՆ Մոնտանա նահանգի Հելենա քաղաքը բարեկամական համագործակցության նպատակով ստորագրեցին «Մտադրությունների մասին հուշագիր» :

Քաղաքային հրապարակ

Ազատամարտիկների պուրակ

Ստեփան Շահումյանի տուն-թանգարան

Սոս Սարգսյանի անվան մշակույթի պալատ

Քաղաքային այգի

Լույս երիտասարդական կենտրոն

Ալեայի անցուղի

Սոս Սարգսյանի արձան

ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԸՆԹԱՑՔԻ ՄԵՋ ԳՏՆՎՈՂ ԾՐԱԳՐԵՐ- 2024Թ.

1.Ստեփանավան համայնքի Արմանիս, Ուրասար, Կաթնաղբյուր բնակավայրերի ջրամատակարարման ցանցերի կառուցում:
Սուբվենցիա (պետական դրամաշնորհ, Ստեփանավան համայնք)

2. Ստեփանավան համայնքի Արմանիս, Ուրասար և Կաթնաղբյուր վարչական բնակավայրերի ճանապարհների հիմնանորոգում:
Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն, Ստեփանավան համայնք

3.Ստեփանավան համայնքի Արմանիս, Կաթնաղբյուր, ՈՒրասարբնակավայրերի մանկապարտեզների կառուցում:
Սուբվենցիա (պետական դրամաշնորհ, Ստեփանավան համայնք), Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն

5. Արմանիս, Ուրասար, Կաթնաղբյուր բնակավայրերի և Ստեփանավան համայնքի 4-րդ միկրոշրջանի գազաֆիկացում:
Սուբվենցիա (պետական դրամաշնորհ, Ստեփանավան համայնք)

Կաթնաղբյուր
Լուսաղբյուր

Արմանիս
Սբ. Նշան

ՈՒրասար
Ջրաշուշանների լիճ

ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2024-2025ԹԹ-ԻՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԾՐԱԳՐԵՐ

1. Աշոտաբերդի թաղամասի թիվ 3 դպրոցի կառուցում :
   2023-2024 թթ Տարածքային զարգացման հիմնադրամ

2. Ստեփան Շահումյանի անվան մշակույթի և ժամանցի կենտրոնի բակի և շենքի վերանորոգում:
   2023-2024 թթ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն

3. 2024 թ-ի նախատեսվում է Ստեփանավանի մասնաշենքի կառուցում ՝ Արտակարգ իրավիճակների նախարարության կողմից:

4. Ստեփանավան համայնքի բազմաբնակարան շենքերի բակերի, թիվ 1, 2, 3 մանկապարտեզների բակերի հիմնանորոգում, բնակավայրերի տարածքների պուրակների բարեկարգում:
 2024-2025 թթ Սուբվենցիա (պետական դրամաշնորհ)

6. Ռումինական 6, 8, 12,14, 20 բազմաբնակարան շենքերի ջերմամեկուսացման և էներգոարդյունավետության բարձրացման աշխատանքներ:
 2024-2025 թթ Սուբվենցիա (պետական դրամաշնորհ) ՄԱԶԾ

7. Ստեփանավան համայնքի կարիքների համար տեխնիկայի ձեռքբերում:
   2024-2025 թթ Սուբվենցիա (պետական դրամաշնորհ)

8. Ավագ դպրոցի պուրակի հիմնանորոգում:
 2023-2024թթ , ՋԻ ԱՅ ՋԵՏ, Ստեփանավանի համայնքապետարան

9. Աշոտաբերդի թաղամասի թվով 15 բազմաբնակարան շենքերի կառուցում:
    2024-2028 թթ պետական դրամաշնորհ

10. Ստեփանավան համայնքի Կաթնաղբյուր բնակավայրի վարչական տարածքում դպրոցի կառուցում 2024թ. ՏԶՀ

11. Մեղապարտի, Սուրբ Նշանի, Ռուսթավելի փողոցի վերանորոգում: 2024-2025թթ Սուբվենցիա

ՍՏԵՓԱՆԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԿ-ՆԵՐԻ ՀԵՏ

ՀԱՄԱՉԱՓ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
Youth Center of Balanced Development

«ՓՐԿԱՐԱՐ ՋՈԿԱՏ» · RESCUE TEAM «LORE»
LORE

ՀՈՒՓՍԻՄՅԱՆՑ ՇՈՒՆՉ
կանանց աջակցման կենտրոն

ՀՀ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՃԳՊՄԱ CMSA
STATE ACADEMY OF CRISIS MANAGEMENT
MINISTRY OF INTERNAL AFFAIRS

ՄԱՐԶԵՐԻ ԵՐԵԽԱՆԵՐԸ ՄԱՐԶԵՐՈՒՄ

ԿԱՄՔ
Երիտասարդական հասարակական կազմակերպություն

SE
Social–Emotional Learning Centre

FULL LIFE
for each and everyone
ԼԻԱՐԺԵՔ ԿՅԱՆՔ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

արմարա

Nonna ART STUDIO

SYC

in

ԴԻՄԱԿԱՅՈՒՆ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

SDA Strategic Development Agency
Strategies for Development

spfa

25 տարի 1998-2023
ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ ՀԱՍԵՐԳ
ANI
22.07.2023

ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՀԿ-ՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԸ

1. **«Արվեստագետների կացարան» արվեստագետների ներգրավման կրթական ծրագիր:**
Դիմակայուն Ստեփանավան հիմնադրամ, Ստեփանավանի մշակույթի և ժամանցի կենտրոն և «ԷՍ-ՊԷ-ԷՖ-Ա» ֆրանսիական բարեգործական կազմակերպություն (SPFA), Հայաստանի մասնաճյուղ, ՄԱԶԾ 2024թ.:

2. **«Հեծանվավարության մշակույթի խթանում» ծրագիր** (նշանների, կանգառների տեղադրում, Մարզային գավաթ միջոցառման անցկացում): Հեծանվորդների ֆեդերացիա ՀԿ, Դիմակայուն Ստեփանավան հիմնադրամ, Ստեփանավանի համայնքապետարան, ՄԱԶԾ, 2024թ.:

3.**«Հոգու ճախրանք » Քոուչինգի և յոգաթերապիայի հանդիպումներ ստեփանավանցի 40-ն անց կանանց հետ ծրագիր:**
« Հռիփսիմյանց շունչ » կանանց աջակցման կենտրոն ՀԿ, «Հայաստանում կանանց հիմնադրամ» 2024թ :

4.**« Ծերությունն ուրախություն է » Բարեհաջող ծերացման մոդելի կիրառումը՝ ի բարօրություն ստեփանավանցի 65-ն անց կանանց, կենսաթոշակառուների հետ ծրագիր:**
« Հռիփսիմյանց շունչ » կանանց աջակցման կենտրոն ՀԿ, Գերմանիայի դաշնություն, ԵՄ, 2024 թթ.

5. **«Շող ցերեկային կենտրոն» ծրագիր:**
«Ամերիկայի Հայ Ավետարանչական» ընկերակցություն (AMAA), Ստեփանավանի մասնաճյուղ, 2024թթ.

ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՀԿ-ՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԸ

6. **«Բացահայտիր Ստեփանավանը երկու անիվների վրա. հեծանվային երթուղիների մշակում,անտառային հեծանվային արահետների ուղենշում»**
Ստեփանավանի « ԼՈՌԷ » փրկակար ջոկատ ՀԿ, ՄԱԶԾ, Ստեփանավանի համայնքապետարան 2024թ.

7.**« Տարեցների ցերեկային զբաղվածության կենտրոն »**
«Ավրորա հոգեբանական կենտրոն» ՀԿ Ստեփանավանի համայնքապետարան 2024 թ.

8.**« Երեխաների խնամքի ցերեկային ծառայությունների տրամադրում » ծրագիր, « Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալ-վերականգնողական ծառայություններ ցերեկային կենտրոնում » ծրագիր, «Երևանի քաղաքապետարանի ներառական ճամբար » ծրագիր:**
«Լիարժեք կյանք» ՀԿ, Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն 2024թ.

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՀԵՏ

ԱՅԼ ՇԱՀԱԳՐԳԻՌ ԿՈՂՄԵՐ

1. ՀՀ կառավարություն
2. Միջազգային կառույցներ
3. Համայնքի բնակչություն
4. Լոռու մարզպետի աշխատակազմ
5. Համայնքի քույր քաղաքներ
6. Դիմակայուն Ստեփանավան հիմնադրամ
7. Տեղական ՀԿ-ներ և երիտ. կենտրոներ
8. Երիտասարդներ/կամավորներ
9. Անհատ ձեռներեցներ
10. Համագործակցող այլ համայնքներ

ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱԳՈՐԾՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԸ ՀՐԱՎԻՐՈՒՄ Է ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ

Ստեփանավանի համայնքապետարանի հետ համագործակցության համար կարող եք կապ հաստատել նշված հեռախոսահամարով, էլ. հասցեով կամ այցելել Ստեփանավանի համայնքապետարան:

Մեր կոնտակտները՝

+374-256-22233

Սոս Սարգսյան 1

stepanavan.hamaynqapetaran@gmail.com

Ֆեյսբուքյան էջ

ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2024Թ.-Ի ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

- Ստեփանավան համայնքը ընդգրկում է Ստեփանավան քաղաքը, Կաթնաղբյուր, Ուրասար և Արմանիս գյուղերը:
- Սահմանակից բնակավայրեր՝ Տաշիր, Լոռի Բերդ, Գյուլագարակ, Սպիտակ խոշորացված համայնքներ և Շիրակի մարզ
- Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1400-1450 մ
- Կլիմա՝ Մթնոլորտային տեղումների միջին տարեկան քանակը 683մմ
- Բնակավայրերի հեռավորությունը Ստեփանավանից՝ Արմանիս 5 կմ,
- Ուրասար 8 կմ, Կաթնաղբյուր 18 կմ
- Վարչական տարածք՝ Ընդհանուր մակերեսը (կմ2),այդ թվում 5333,6 հա
- Բնակչության ընդհանուր թիվը (մարդ) 18930
- ԼՂՀ-ից բռնի տեղահանված անձանց թիվը 389
- Հաշմանդամ 954
- Թոշակառու 3159
- Մահացության դեպքերի քանակը /09.09.2024թ/ 32
- Նպաստառու ընտանիք 1113
- Գրանցված ծնունդների քանակը /09.09.2024թ/ 67
- Մանկապարտեզ հաճախող երեխաների թիվը 416
- Արտադպրոց հաճախող սաների թիվը 995
- Դպրոց հաճախող երեխաների թիվը 1956
- ՀՀ ՆԳՆ ՃԿՊԱ հաճախող ուսանողների թիվը 309
- Ա.Քալանթարի անվան պետական գյուղատնտեսական քոլեջ հաճախող ուսանողների թիվը 330
- Հանրային շենք-շինություններ
- Մշակույթի տուն 1
- Թանգարան 1
- Գրադարան 1
- Արվեստի դպրոց 1
- Մարզադպրոց 1
- Առողջապահական կազմակերպություններ Հիվանդանոց/Պոլիկլինիկա 1/1

Շնորհակալություն

ՌԱՁՄԱՎԱՐԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ՌՈՒ 1
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՂ ՀԱՄԱՅՆՔ
ՌՈՒ 2
ԱՇԽԱՏՈՂ, ԱԳՐՈՏՆՏԵՍԱՊԵՍ ՇԱՐԳԱՑԱԾ ՀԱՄԱՅՆՔ
ՌՈՒ 3
ԿՐԹԱԾ, ՄՇԱԿՈՒԹԱԲԵՐ, ՆՈՐԱՐԱՐԱԿԱՆ ԵՎ ԺԱՄԱՆՑՈՎ ՀԱԳԵՑԱԾ ՀԱՄԱՅՆՔ
ՌՈՒ 4
ՀԱԳԵՑԱԾ, ՍՐՑՈՒՆԱԿ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ՀԱՄԱՅՆՔ
ՌՈՒ 5
ԴԻՄԱԿԱՅՈՒՆ, ԻՆՔՆԱՏԻՊ ԵՎ ԿԱՆԱՉ ՀԱՄԱՅՆՔ
ՌՈՒ 6
ԱՌՈՂՋ ԵՎ ՍՊՈՐՏԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ